

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երեքշաբթի, 14 Յոկտեմբերի, 2008

Կիրակի, Յոկտեմբերի 12-ի երեկոյեան, աւելի քան 900 հիւրերի ու համակիրների մասնակցութեամբ, Միացեալ Նահանգների երբեմնի նախագահ Ռանըլդ Ռեյզընի անուան գրադարանի շքեղ հանդիսասրահում տեղի ունեցաւ ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի Զայ Դատի Յանձնախմբի տարեկան ճաշկերոյթ-հաւաքը, որի ընթացում մեծարուեցին Դեմոկրատական կուսակցութեան փոխնախագահական թեկնածու, Սենատոր Զօ Բայդընը, Լոս Անջելոսի քաղաքապետ Անթոնիօ Վիարագոսան, հանգուցեալ նախագահ Ռանըլդ Ռեյզընը եւ Զայ Դատի Յանձնախմբի երկար տարիների պաշտպան Աշխէն Փիլաւջեանը: Միջոցառմանը ելոյթ ունցեալ Ամերիկայի Զայ Դատի Յանձնախմբի ատենապետ Քէն Խաչիկեանը, որը խստօրէն քննադատեց Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութեան պաշտօնեայ, Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱԶԿ-ի Միոսկի համանախագահ Սէթու Բրայզայի կատարած վերջին հաստատումները: Քէն Խաչիկեանն ամերիկեան քաղաքականութեան համար «սկզբունքից նահանջ» որակեց Բրայզայի այն հաստատումը, թէ Զայաստանը պէտք է ընդունի, որ Լեռնային Ղարաբաղը մաս է կազմում Ադրբեյջանին: Ինչպէս շեշտեց Խաչիկեանը, մինչեւիսկ Բաքուի եւ Անկարայի իշխանութիւնները հասկանում են, որ Բրայզային առաջարկը անհիմն է: Աշխարհի իւրաքանչիւր ժողովուրդ իրաւունք ունի ազատօրէն ապրելու՝ իր կամքով ընտրուած կառավարութեան ղեկավարութեամբ,- յայտարարեց Քէն Խաչիկեանը: Լոս Անջելոսին մերձակայ Միմի Վալիում տեղի ունեցած սոյն միջոցառմանը ներկայ էին Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան անդամներ Ադամ Շիֆը, Բրադ Շերմանը, որը Սենատոր Բայդընի կողմից ընդունեց Զայ Դատի Յանձնախմբի «Ազատութեան մրցանակը»: «Սենատոր Բայդընը խորապէս զգացուած է իրեն շնորհուած այս մրցանակի համար եւ խոստանում է շարունակել իր զօրակցութիւնը ամերիկահայ համայնքին յուզող հարցերի նկատմամբ», - մրցանակն ընդունելիս յայտարարեց կոնգրէսական Բրադ Շերմանը: Միջոցառմանը մեծարանքի արժանացաւ նաեւ Լոս Անջելոսի քաղաքապետ Անթոնիօ Վիարագոսան, ստանալով «Տարուայ մարդը» շքանշանը: Իսկ Վուդրօ Վիլսոնի անուան մրցանակով մեծարուեց նախկին նախագահ Ռանըլդ Ռեյզըն, որը հանդիսանում է Զայոց Ցեղասպանութիւնը հաստատած Միացեալ Նահանգներու վերջին նախագահը:

Այս լուրերը տրամադրուած են
ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Չանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: